

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԴԻԱՆՑ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հոդվածը ստացվել է՝ 05.08.24, ուղարկվել է գրախոսման՝ 27.11.24, երաշխավորվել է տպագրության՝ 13.12.24

Ներածություն: Ֆինանսական հոսքերն, իրենց բոլոր փուլերում միջնորդավորելով կազմակերպության կապիտալի շրջանառությունը, բազմակողմանի հասկացություն է, որն իր մեջ ներառում է տնտեսական գործունեությունը սպասարկող հոսքերի բազմաթիվ տեսակներ:

Հոդվածում ներկայացվում են ֆինանսական հոսքերի դասակարգման և դրանց վրա ազդող գործոնների առանձնահատկությունները, հիմնավորվել է այդ ուղղությամբ ավելի խորը ուսումնասիրությունների իրականացման և հաշվարկային ցուցանիշների գործնական կիրառման մոտեցումների վերանայման ու կատարելագործման անհրաժեշտությունը: Քննարկվել են կազմակերպության դրամական հոսքերի վրա ազդող գործոնները և կոնկրետ ընկերության օրինակով կատարվել դրանց գնահատում ու միկրոմակարդակում ֆինանսական հոսքերի դասակարգման և գնահատման գործընթացի բարելավման վերաբերյալ արվել առաջարկություններ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է ինչպես ֆինանսական հոսքերի վերաբերյալ ֆինանսական գիտության արդի մոտեցումների, այնպես էլ կազմակերպությունների ֆինանսական հոսքերի նոր ձևերի ու տեսակների խմբավորման իրականացման առումով:

Նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակը միկրոմակարդակում ֆինանսական հոսքերի դասակարգման, դրանց վրա ազդող գործոնների բացահայտման և գնահատման տեսական դրույթների ուսումնասիրությունն է և գործնական առաջարկությունների մշակումը ուղղված ՀՀ իրական հատվածի կազմակերպություններում ֆինանսական ակտիվների կառավարման կատարելագործմանը, որի համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

-ուսումնասիրել ֆինանսական հոսքերի դասակարգման, դրանց վրա ազդող գործոնների գնահատման մոտեցումներն ու մեթոդները,

-բացահայտել ՀՀ արտադրական կազմակերպություններում ֆինանսական հոսքերի դասակարգման, ինչպես նաև այդ հոսքերի վրա ազդող գործոններն ու դրանց ազդեցության գնահատման մոտեցումներն ու մեթոդները,

-ներկայացնել կոնկրետ և իրատեսական առաջարկություններ միկրոմակարդակում ֆինանսական հոսքերի արդի դասակարգումների ու այդ հոսքերի վրա ազդող գործոնների բացահայտման և դրանց ազդեցության չափի գնահատման վերաբերյալ:

Մեթոդաբանությունը: Հետազոտության ընթացքում կիրառվել են ֆինանսական ցուցանիշների համադրման և գործոնային կախվածության հաշվարկման մեթոդներ: Ուսումնասիրությունների համար հիմք են հանդիսացել

առանձին կազմակերպության վերջին չորս տարվա ֆինանսական հաշվետվությունների տվյալները:

Գրականության վերլուծություն: Ֆինանսական հոսքը, իր բոլոր փուլերում հանդիսանալով կազմակերպության կապիտալի շրջանառությունն ապահովող միջոցներից մեկը, լայն հասկացություն է, որն իր մեջ ներառում է տնտեսական գործունեությունը սպասարկող հոսքերի բազմաթիվ տեսակներ:

Ժամանակակից գիտական մոտեցումներում տարբերակվում են ֆինանսական հոսքեր և դրամական միջոցների հոսքեր հասկացությունները: Մեր կարծիքով դրանք նույնական և փոխարինելի հասկացություններ չեն, քանի որ կազմակերպության ֆինանսական հոսքերը պարտադիր չէ, որ կապված լինեն միայն դրամական միջոցների տեղաշարժի հետ, այլ կարող են արտահայտել կազմակերպության հաշվարկները ոչ դրամական միջոցներով, օրինակ՝ արժեթղթերով, ապրանքանյութական պաշարներով: Մյուս կողմից, կազմակերպության ներքին ֆինանսական հոսքերը նպատակային ֆոնդերի ձևավորման ընթացքում ոչ մի կերպ կապված չեն դրամարկղում, հաշվարկային, արտարժույթային և այլ հաշիվներում դրամական միջոցների հոսքերի հետ: Հետևաբար, եթե դրամական միջոցների հոսքը կարող է սահմանվել որպես դրամական միջոցների հոսք ձեռնարկության ֆինանսական հաշվառման հաշիվներում (դրամարկղում, հաշվարկային, արտարժույթային և այլ հաշիվներում), ապա ֆինանսական հոսքը որոշում է կազմակերպության բոլոր ռեսուրսների շարժը:

Քանի որ ֆինանսական հոսքը արտացոլվում է դրամական միջոցների ներհոսքի և արտահոսքի տեսքով, հետևապես դրա կառավարումը կապակցված պետք է լինի ֆինանսական հոսքերի շարժի հետ, ինչպես կազմակերպության ներսում, այնպես էլ այլ կազմակերպությունների հետ հարաբերությունների արդյունքում՝ կապված տարատեսակ ռեսուրսների ձեռք բերման, վերաբաշխման և ծախսման հետ: Հետևապես կարելի է համաձայնվել այն տեսակետի հետ, որ կառավարման գիտության շրջանակներում դրամական և ֆինանսական հոսքերը նույնական են¹:

Հայրենական տնտեսագիտական գրականության մեջ ֆինանսական հոսքերի դասակարգման հարցերին անդրադարձել են ինչպիսիք են Լ. Բադանյանը, Կ. Աբգարյանը, Գ. Չատինյանը, Ա. Մաթևոսյանը², Ա. Բայադյանը, Ս. Մկրտչյանը և ուրիշները³: Այնուհանդերձ առկա են չլուսաբանված շերտեր:

1 Журнал прикладных исследований: современные подходы к управлению финансовыми потоками предприятия, Саидов Ахмед Асланбекович, УДК 336, DOI 10. 47576/2712-7516_2022_3_2_132, стр.412-418, <https://cyberleninka.ru/article/n/sovremennye-podhody-k-upravleniyu-finansovymi-potokami-predpriyatiya>

2 Բադանյան, Լ., Աբգարյան, Կ., Չատինյան, Գ., Մաթևոսյան Ա. և ուրիշներ, Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ /Դասագիրք/Եր., 2010: էջ 337-339

3 Բայադյան, Ա., Մկրտչյան, Ս., Ֆինանսների ընդհանուր տեսություն. Համառոտ ուսումնական ձեռնարկ Երևան. Լիմուշ. 2016., էջ111

Տնտեսվարող սուբյեկտների միջև իրականացվող տարբեր բիզնես գործարքների ներկա զարգացումները պահանջում են ավելի խորը ուսումնասիրել ֆինանսական հոսքերի նոր դասակարգման առանձնահատկությունները:

Ընդհանրապես յուրաքանչյուր կազմակերպության ֆինանսական հոսքերի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է դրանց այնպիսի դասակարգում, որը թույլ կտա դիտարկել այդ հոսքերի շարժը, իրականացնելով դրանց անհրաժեշտ վերլուծություն և պլանավորում:

Նշենք, որ գրականության մեջ շրջանառվող շատ դասակարգումներում ֆինանսական հոսքերը սահմանափակվում են կամ ազգային տնտեսության կամ ժամանակային կամ գործառնական շրջանակներում:

Ընդհանրացնելով ֆինանսական հոսքերի դասակարգման վերաբերյալ արտասահմանյան և հայրենական գիտական-մասնագիտական գրականության մեջ բերված մոտեցումները՝ մեր կողմից կատարվել են լրացումներ (աղյուսակում 1)^{4,5,6}:

Աղյուսակ 1

Ֆինանսական հոսքերի դասակարգումը

1	Ըստ կազմակերպության հետ հարաբերակցության	Ներքին, արտաքին
2	Ըստ տնտեսական գործունեության տեսակի	Ըստ ընթացիկ (հիմնական) գործունեության,
		ըստ ֆինանսական գործունեության,
		ըստ ներդրումային գործունեության
3	Ըստ տնտեսական գործունեության սպասարկման մասշտաբի	Ամբողջ կազմակերպության
		ըստ գործունեության տեսակի
		ըստ կառուցվածքային ստորաբաժանումների,
		ըստ առանձին գործառնությունների
4	Ըստ շարժման ուղղության	Պայմանական ներհոսող,
		պայմանական արտահոսող
5	Ըստ գոյության ձևի	

4 Бланк, И., Управление финансовыми ресурсами / И. А. Бланк. – М.: Омега-Л, 2013. – с.16-19

5 Лытнева, Н., Системный подход к анализу эффективности денежных потоков в управлении оборотным капиталом предприятия / Н. А. Лытнева, Ю. М. Петрова, О. А. Ростовцева // Научные записки ОрелГИЭТ. – 2019. – № 4 (32). – ст. 12–19.

6. Щитникова, И., денежные потоки организации: классификация, особенности формирования и использования, ст. 86-91
http://edoc.bseu.by:8080/bitstream/edoc/93149/1/Shchitnikova_85_91.pdf

		Դրամական ձևով (այդ թվում կանխիկ և անկանխիկ ձևով), ոչ դրամական ձևով
6	Ըստ ֆինանսավորման աղբյուրների	Մեփական, փոխառու, պետական ֆինանսավորում
7	Ըստ ծավալի որոշման մեթոդի	Համախառն, զուտ
8	Ըստ արտարժույթի ներկայացվածության ձևի	Ազգային արժույթով, Արտարժույթով
9	Ըստ գործառնությունների իրականացման բավարարվածության	Օպտիմալ (բավարար), հավելուրդային, Պակասուրդային
10	Ըստ տնտեսական կապի ձևի	Հորիզոնական, Ուղղահայաց
11	Ըստ տևողության	Միանգամյա, կարճաժամկետ, Երկարաժամկետ
12	Ըստ ժամանակային անընդհատության	Կանոնավոր, դիսկրետ
13	Ըստ ժամանակային գնահատման	Ներկա, ապագա
14	Ըստ պլանավորման և բյուջետավորման գործընթացի	Պլանային, արտապլանային
15	Ըստ ձևավորման ժամանակային միջակայքերի կայունության	Կանոնավոր, միատեսակ և ոչ միատեսակ միջակայքերով, Ոչ կանոնավոր միատեսակ ժամանակային միջակայքերով
16	Ըստ կառավարման հնարավորության	Կառավարելի, անկառավարելի
17	Ըստ գործառնության իրականացման կարևորության	Նախապատվելի, երկրորդական
18	Ըստ չափի ավելացման մեթոդի	Կառուցվածքային վերակառուցման մեթոդ, կազմակերպության թափանցիկության և բացության բարձրացման մեթոդ, արդյունաբերական ներուժի բարձրացման մեթոդ

19	Ըստ գնահատման մոտեցման	Ծախսային մոտեցում,
		համեմատական մեթոդ,
		եկամտային մեթոդ
20	Ըստ ծախսման ուղղությունների	Ըստ մատակարարների և կապալառուների հետ հաշվարկների,
		ըստ գնորդների և պատվիրատուների հետ հաշվարկների,
		ըստ բյուջետային և արտաբյուջետային հիմնադրամների հետ հաշվարկների,
		ըստ անձնակազմի հետ հաշվարկների,
		ըստ սպասարկող առևտրային և կառավարչական ծախսերի,
		ըստ նպատակային ֆինանսավորման և բարեգործության
21	Կապված որոշման նպատակից	Շուկայական, սահմանափակ, փոխարինող, վերարտադրվող, նպատակային, ներդրումային, հարկման նպատակով, լուծարային, գույքի ոչնչացման դեպքում, հատուկ
22	Ըստ նշանակության	Գնումների համար նախատեսված, արտադրական, ձեռք բերովի, կենցաղային, տրանսպորտային, սպասարկող պահեստամասեր(պահեստային)սերվիսային
23	Ֆինանսական ռեսուրսների տեսակից կախված	Դրամական հոսք, արժեթղթերի հոսք,
		նյութական հոսքեր արժեքային արտահայտությամբ

Մեր կարծիքով, հայտանիշների կազմը, որպես վերլուծության օբյեկտի, պետք է բավարար լինի ոչ միայն ընդհանուր ֆինանսական հոսքերի, այլև դրանց հիմնական տարրերի ամենակարևոր հատկությունները որոշելու համար: Որպես դրամական հոսքերի կառավարման օբյեկտի, դրանց ճշգրտումը հնարավորություն է ընձեռնում էապես փոխել կազմակերպության ֆինանսական վիճակը:

Նպատակահարմար ենք դիտում ըստ ձևավորման ժամանակաշրջանի ֆինանսական հոսքերի վերլուծությունը տրոհել հետահայաց, ընթացիկ,

պլանավորված և ռազմավարական տեսակներին:

Ֆինանսական հոսքերի հետահայաց վերլուծության և գնահատման առարկան՝ անցած ժամանակահատվածում դրանց դրսևորումների ամփոփումն է:

Ընթացիկ ֆինանսական հոսքերը տեղի են ունենում կարճաժամկետ միջակայքում (մեկ օր, մեկ ժամ...) և մշտադիտարկման են ենթարկվում գրեթե առաջացման պահից սկսած:

Պլանավորված ֆինանսական հոսքերը կազմում են ֆինանսական բյուջեի բովանդակությունը (դրամական միջոցների հոսքի պլան)՝ առաջիկա՝ օրացուցային տարին չգերազանցող ժամանակահատվածում:

Ֆինանսական հոսքերի ռազմավարական տեսականները կանխատեսելի են և ներկայացնում են կազմակերպության բիզնես պլանի մի մասը, որի նպատակը կառավարչական խնդիրների լուծումն է ավելի երկարաժամկետ հեռանկարում (3-5 տարի կամ ավելի):

Ֆինանսական հոսքերի վերաբերյալ անհրաժեշտ վերլուծական տեղեկատվության ձևավորման նպատակով անհրաժեշտ է առանձնացնել դասակարգման այնպիսի հատկանիշ, ինչպիսին է ֆինանսական հոսքերի "ինտենսիվության աստիճանը", ըստ որի դրանք պետք է բաժանել առավելագույն, նվազագույն և օպտիմալ դրամական հոսքերի:

Դրամական առավելագույն հոսքերը տվյալ ժամանակահատվածում ամենամեծ դրական և բացասական հոսքերն են՝ հաշվի առնելով ինտենսիվության գործոնը՝ դրանց գնահատման և պլանավորման նպատակով:

Տնտեսական տարածության մասնակիցների գործունեությունը սպասարկող ֆինանսական հոսքերը դեռևս շարունակում են մնալ բազմակողմ հասկացություն, որի կառուցվածքային տարրերը, դրանց առաջացման պատճառները, շարժման հետազոտերը և սպասարկման գործիքակազմը թվային դաշտում հնարավորություն չեն ընձեռնում հստակորեն որոշելու այդ հոսքերի տնտեսական բնույթը:

Ֆինանսական հոսքերը, վերջիններս կառուցվածքը և տեղաշարժի հետազոտում ներկայումս մեծ հետաքրքրություն են ներկայացնում հետազոտողների տարբեր խմբերի համար, քանի որ դրանք հիմք են հանդիսանում կառավարչական անհրաժեշտ որոշումների կայացման համար:

Շատ դասակարգումներում անտեսված են մնում միջազգային և պետական ֆինանսների ոլորտները: Ինչպեսարդեն նկատել ենք ֆինանսները սահմանափակվում են կամ ազգային տնտեսության կամ ժամանակային կամ գործառնական շրջանակներով:

Կարծում ենք, որ ֆինանսական հոսքերը պետք է վեր լինեն ցանկացած սահմանափակումից, մանավանդ որ թվայնացման ժամանակակից պայմաններում վերանում են դրամական հոսքերի շարժի տարածական և ժամանակային սահմանները:

Հետևաբար՝ ֆինանսական հոսքերի գոյություն ունեցող դասակարգումները անհրաժեշտ է լրացնել սուբյեկտա-մակարդակային

դասակարգմամբ՝ հաշվի առնելով շուկայական սուբյեկտների գործունեության մակարդակի սկզբունքը, համաձայն որի՝ կարող են հանդես գալ որպես ֆինանսական շուկայի բոլոր սուբյեկտներն ընդգրկող և տարբերակող համընդհանուր հայտանիշ (Գծապատկեր 1):

Դա թույլ կտա հստակ հետևել գործառնությունների կոնկրետ մասնակիցներին, որոշել նրանց դերը տվյալ շրջանառության մեջ և գնահատել ապագա ներուժը, ինչպես նաև համեմատել ֆինանսական հոսքերը դրանց առաջացման մակարդակին համապատասխան:

Նշված հարցերի վերաբերյալ կան բավականաչափ գիտական հրապարակումներ, սակայն թվային տեխնոլոգիաների արագ մուտքը հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներ, արդիական է դարձնում ֆինանսական համակարգում դրական կամ բացասական զարգացումների, ինչպես նաև հնարավոր ռիսկերի կանխատեսումը:

Այսպիսով, ոչ միայն կարելի է այլև ցանկալի է առանձնացնել ֆինանսական հոսքերի անհատի, կազմակերպության, պետության և միջպետական մակարդակները:

Անհատական ֆինանսական հոսքերը ծագում են ֆիզիկական անձանց մակարդակում, որոնք ունեն որոշակի եկամուտներ և կատարում են վճարումներ անձնական միջոցներից:


Կազմակերպության ֆինանսական հոսքերը ծագում են առանձին տնտեսավարող սուբյեկտի մակարդակում՝ անկախ դրա կազմակերպարարական տեսակից և ազդում են դրա ֆինանսական վիճակի վրա: Այս հոսքերը կարող են հատվել պետական մակարդակի հոսքերի հետ, քանի որ յուրաքանչյուր կազմակերպություն հաշվարկներ է կատարում արտաքին ձեռնարկատիրական միջավայրում, որոնք պետք է արտացոլվեն կազմակերպությունների համապատասխան հաշիվներում:

Ազգային ֆինանսական հոսքերն իրենցից ներկայացնում են փոխադարձ հաշվարկներ տնտեսավարող սուբյեկտների, բյուջետային համակարգի մակարդակների, տարբեր ֆինանսական հաստատությունների և տարածքային սուբյեկտների միջև:

Այս հոսքերը արտացոլվում են կառավարման պետական և տարածքային մարմինների բյուջետային աջակցության, բյուջեի եկամտային մասի համալրման, ինչպես նաև տարբեր սոցիալ-տնտեսական միջոցառումների և սոցիալական խմբերի ֆինանսավորման համապատասխան փաստաթղթերում: Ընդ որում՝ նշված հոսքերի շարժի արդյունքները գրանցվում են ազգային հաշիվներում:

Միջազգային ֆինանսական հոսքերը ծագում են ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքի արտահանման (ներմուծման) դեպքերում, երբ դրանց դիմաց վճարումը կատարվում է այլ երկրի գործընկերոջը: Նման հոսքի առաջացման հիմնական հայտանիշը տնտեսավարող սուբյեկտի արժույթային հաշվում դրա արտացոլումն է: Այս հոսքերը կարող են առաջանալ առանձին պետությունների միջև ֆինանսական օգնության, միջազգային նախագծերում ներդրումների, միջպետական վարկի դեպքերում: Ընդ որում՝ միջազգային

Ֆինանսական հոսքեր կարող են առաջանալ նաև տնտեսավարող սուբյեկտների և վերագրային ֆինանսական կազմակերպությունների, տարբեր երկրների գործընկերների միջև:



Գծապատկեր 1. Ֆինանսական հոսքերի սուբյեկտա-մակարդակային դասակարգումը⁷

7 Կազմվել է հեղինակի կողմից

Ֆինանսական հոսքերի տարբերակումն ըստ շուկայական սուբյեկտների գործունեության մակարդակների թույլ է տալիս հստակ հետևել գործառնությունների կոնկրետ մասնակիցներին, որոշել նրանց դերը տվյալ շրջանառության մեջ և գնահատել դրանց ապագա ներուժը, ինչպես նաև համեմատել դրամական հոսքերը դրանց առաջացման մակարդակին համապատասխան:

Ֆինանսական հոսքերի կազմակերպման լավագույն ձևը ընտրելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն գործոնները, որոնք ժամանակի ընթացքում ազդում են դրանց ծավալի և ձևավորման բնույթի վրա: Նկատենք, որ կազմակերպության ֆինանսական հոսքերի հայեցակարգը մշակող գիտնականների կողմից այս հարցերը դեռևս անհրաժեշտ խորությամբ դեռևս չեն ուսումնասիրվում:

Այդպիսի գործոնները կարող են լինել՝

- Արտաքին՝
 - հարկային քաղաքականությունը,
 - ապրանքային շուկայի մրցակցային պայմանները,
 - արժեթղթերի շուկայում գործող պայմանները,
 - պատրաստի արտադրանքի արտադրության և իրացման սեզոնայնությունը,
 - հումքի և նյութերի մատակարարումը,
 - վարկ ստանալու հնարավորությունը,
 - հաշվարկային գործառնությունների իրականացման ձևավորված պրակտիկան,
 - նպատակային ֆինանսավորման և (կամ) երկարաժամկետ անտոկոս փոխառություններ ստանալու հնարավորությունը,
 - գնաճի մակարդակը:
- Ներքին՝
 - կազմակերպության կյանքի ցիկլի փուլը,
 - արտադրության և ֆինանսական ցիկլի տևողությունը,
 - արտադրության աճի տեմպը,
 - ֆինանսական ռազմավարությունը,
 - ներդրումների հնարավորությունը և անհրաժեշտությունը,
 - կազմակերպության ամորտիզացիոն քաղաքականությունը,
 - գնորդների և հումքի մատակարարների հետ հաշվարկների կարգը,
 - կազմակերպության վճարային հաշվեկշռում ոչ դրամական հաշվարկների մեծությունը,
 - գործառնական լծակը,

○ դրամական հոսքերի ռիսկը⁸:

Կազմակերպության ֆինանսական հոսքերի վրա ազդող գործոնների ուսումնասիրության արդյունքում կարելի է գալ այն հետևության, որ դրանց ավանդական գնահատումը հաշվի չի առնում ներկայիս միտումները, որոնք ազդում են ոչ միայն դրանց ծավալի, այլև կազմակերպության գործունեության վրա:

Ներկա պայմաններում մի շարք ընթացիկ գլոբալ մարտահրավերների հաղթահարման հաջողությունը սերտորեն կապված է այն բանի հետ, թե որքանով են բնապահպանական, սոցիալական և կառավարման (ESG) գործոնները ինտեգրվելու կազմակերպության ռազմավարության և բիզնես մոդելի մեջ ու որքան լրջորեն են կառավարվելու դրանց հետ կապված ռիսկերը:

Հարկ է նշել, որ ESG-ի հարցերով ակտիվորեն զբաղվում են ոչ միայն պետական, այլև միջազգային կազմակերպությունների, ֆոնդային բորսաների, վարկանիշային գործակալությունների, ներդրողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ոչ առևտրային կազմակերպությունների և այլ մակարդակով:

Կազմակերպությունների բնապահպանական, սոցիալական և կառավարչական գործունեության ազդեցության գնահատման հարցերը մշտապես գտնվել են երկար տնտեսագիտության և կառավարման ուշադրության կենտրոնում: Friede, Busch, and Bassen-ը իրականացրել է մեծ թվով էմպիրիկ ուսումնասիրություններ, ուղղված ESG և կորպորատիվ ֆինանսական գործունեության միջև կապի գնահատմանը և հայտնաբերել այդ ցուցանիշների միջև փոխկապակցվածություն, որը դրական է ժամանակի մոտ 90% դեպքերում⁹:

Մասնագիտական գրականության, միջազգային խորհրդատվական ընկերությունների, ինչպես նաև արտասահմանյան փորձի ուսումնասիրություններից կարելի է եզրակացնել, որ կազմակերպության ESG գործունեությունը ազդում է ֆինանսական հոսքի վրա հիմնականում հետևյալ հինգ ուղղություններով՝

- նպաստում է եկամուտների աճին,
- նվազեցնում է ծախսերը,
- նվազագույնի է հասցնում կարգավորող և իրավական մարմինների միջամտությունը,
- բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը,
- օպտիմալացնում է ներդրումները և կապիտալ ծախսերը:

8 Хахонова, Н., Выявление, И., Анализ Факторов, Влияющих На Формирование Денежных Потоков Коммерческих Организаций, <http://www.bulletennauki.com> 375, Бюллетень Науки

9 Friede, G., Busch, T., & Bassen, A. ESG and financial performance: Aggregated evidence from more than 2000 empirical studies. *Journal of Sustainable Finance & Investment*. 2015. 5(4). P. 210–233

Վերլուծություն: Հաշվի առնելով, որ հեռահաղորդակցության ոլորտը բավականին կապիտալատար է, որում խոշոր կազմակերպությունների համար շատ ավելի հեշտ է ավելացնել շուկայում իրենց մասնաբաժինը ի հաշիվ ունեցած կապիտալի, կապված հետազոտության, զարգացման ծախսերի և կապիտալի երկարաժամկետ վերաներդրման հետ, հողվածում քննարկվել են «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի ընթացիկ գործունեության արդյունքները 2019-2023 թթ.-ի ընթացքում:

Աղյուսակ 2

Ընթացիկ գործունեության համար ֆինանսական միջոցների հոսքի մեծության գործոնային վերլուծության նախնական տվյալները, հազար դրամ¹⁰

Ցուցանիշի անվանումը	Տարիներ				
	2019	2020	2021	2022	2023
զուտ ֆինանսական հոսքեր, Y	-91021	-3351750	1251534	-851260	373962
հասույթ, X1	34792686	29541097	31710514	34576678	34022153
ինքնարժեք, X2	22331868	17191394	21587131	22630336	22435659
զուտ շահույթ, X3	2419722	2289819	3468897	8677300	4526719
ոչ նյութական ակտիվներ, X4	3245753	3995028	3918357	4285274	6343574
հիմնական միջոցներ, X5	15582944	18207988	18143705	21578740	24949814
դերիտորական պարտքեր, X6	3491051	3477754	5710491	8203651	9005309
դրամական միջոցներ, X7	3567276	215526	1467060	615800	989762
սեփական կապիտալ, X8	44143132	22176212	23859064	31335669	41274107
երկարաժամկետ պարտավորություններ, X9	5336375	10896128	12605848	22065854	23278348
կրեդիտորական պարտքեր, X10	4499040	6309042	6779993	8523257	8402202

Ուսումնասիրություն ֆինանսական միջոցների հոսքի արժեքը (y) ընդունված է որպես արդյունավետության չափանիշ, քանի որ այդ տարիների դրամական հոսքերի մասին հաշվետվություններում կազմել են ընդհանուր դրամական միջոցների հոսքի ձևավորման հիմնական մասը: Ընդ որում՝ այդ հոսքերը կապված են կազմակերպության հիմնական գործունեության հետ, որոնք արտացոլում են եկամուտներն ու ծախսերը, իսկ դրանք իրենց հերթին կապված են ապրանքների վաճառքի և հարկային վճարումների հետ:

Ուսումնասիրվող հատկանիշների միջև գոյություն ունի կոռելյացիոն կապ և հետազոտվող հատկանիշների մեկի փոփոխությունն ընթանում է մյուսի միջին նշանակության համաչափությամբ, ուրեմն գործ ունենք գծային փոխկապվածության հետ, որի չափի՝ կովարիացիայի և համապատասխան ստանդարտ շեղումների հարաբերությունը չափվում է Պիրսոնի գծային կոռելյացիայի գործակցի միջոցով՝

¹⁰ Կազմվել է հեղինակի կողմից «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ 2020-2023 թթ. ֆինանսական հաշվետվությունների և անկախ աուդիտորական եզրակացությունների տվյալների հիման վրա.

https://www.telecomarmenia.am/file_manager/

$$r = \frac{\sum_{i=1}^n (x_i - \bar{X})(x_i - \bar{Y})}{(n-1)\sigma_x \sigma_y} \quad 11;$$

Ներկայացված տվյալների հիման երկու քանակական ցուցանիշների համար Պիրսոնի գուգային կոռելյացիայի գործակցի հաշվարկման արդյունքները բերված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Փոխկապակցված գործոնների կոռելյացիայի գործակցի հաշվարկը¹²

Կոռելյացիայի գործակիցը	Մեծությունը	Կապի խստությունը
rx1y	0.55	ուժեղ կոռելյացիա
rx2y	0.82	ավելի ուժեղ կոռելյացիա
rx3y	0.12	թույլ կոռելյացիա
rx4y	0.19	թույլ կոռելյացիա
rx5y	0.15	թույլ կոռելյացիա
rx6y	0.42	միջին կոռելյացիա
rx7y	0.47	միջին կոռելյացիա
rx8y	0.39	միջին կոռելյացիա
rx9y	0.15	թույլ կոռելյացիա
rx10y	0.11	թույլ կոռելյացիա

Աղյուսակ 3-ից արդյունքային ցուցանիշի և կախյալ փոփոխականների կոռելյացիայի գործակիցների հաշվարկների արդյունքների հիման վրա կարելի է գալ այն հետևության, որ արդյունավետ ցուցանիշի (Y) կապը X₃, X₄, X₅, X₉ և X₁₀ կախյալ փոփոխականների հետ թույլ է:

Աղյուսակ 3-ի տվյալների հիման վրա կարելի է կառուցել դիտարկված ցուցանիշների միջև գծային կապի ուժգնությունն ու ուղղությունն արտահայտող հարաբերակցության մատրիցա (Աղյուսակ 4):

Կախյալ փոփոխականների միջև մուլտիկոլինարության դեպքերի բացառման համար անհրաժեշտ է մոդելից բացառել X₂, X₄, X₆, X₇, X₉, X₁₀ և X₁₁ գործոնները: Այսպիսով՝ աղյուսակ 4-ից պարզ է դառնում է, որ Y (զուտ ֆինանսական հոսքեր) արդյունքային ցուցանիշը X₁ (հասույթ), X₃ (զուտ շահույթ), X₅ (հիմնական միջոցներ) և X₈ (սեփական կապիտալ) գործոնների հետ համապատասխանաբար ունի ուժեղ, թույլ, թույլ և միջին կապի սերտություն: Վերլուծության արդյունքում պարզվում է, որ սրանք այն գործոններն են, որոնց օգտագործման պարագայում մուլտիկոլինարության դեպք ի հայտ չի գալիս: Այս գործոնների փոփոխություններն էական ազդեցություն ունեն կազմակերպության

11 Գալստյան, Ա., Մաթեմատիկական վիճակագրության մեթոդները հոգեբանական հետազոտություններում: Ուսումնական ձեռնարկ / Ա.Ս. Գալստյան– Եր.: Հեղ. հրատ., 2015. – էջ 35, <http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2018/02/MatPsy2015.pdf>

12 Կազմվել է հեղինակի կողմից

գուտ ֆինանսական հոսքերի ձևավորման վրա, բայց չի կարելի բացառել նաև, որ դիտարկված մյուս գործոնները ևս կարող են ունենալ որոշակի ազդեցություն:

Աղյուսակ 4

Դիտարկված ցուցանիշների միջև գծային կապի ուժգնությունն ու ուղղությունն արտահայտող հարաբերակցության կոռելյացիոն մատրիցա¹³

	Y	X ₁	X ₂	X ₃	X ₄	X ₅	X ₆	X ₇	X ₈	X ₉	X ₁₀
Y	1										
X ₁	0.55	1									
X ₂	0.82	0.91	1								
X ₃	0.12	0.5	0.51	1							
X ₄	0.19	0.16	0.22	0.27	1						
X ₅	0.15	0.25	0.3	0.56	0.94	1					
X ₆	0.42	0.48	0.59	0.75	0.8	0.92	1				
X ₇	0.47	0.53	0.47	-0.38	-0.45	-0.57	-0.4	1			
X ₈	0.39	0.84	0.66	0.03	0.26	0.17	0.23	0.66	1		
X ₉	0.15	0.28	0.36	0.76	0.81	0.96	0.96	-0.63	0.05	1	
X ₁₀	0.11	0.13	0.25	0.76	0.74	0.91	0.91	-0.73	-0.14	0.98	1

Նման վերլուծությունը կարող է օգնել կազմակերպություններին ոչ միայն գնահատել գուտ ֆինանսական հոսքերի վրա տարբեր գործոնների ազդեցությունը, այլ նաև կատարելու կանխատեսումներ և կառուցելու համապատասխան ռեգրեսիոն մոդելներ:

Մեր կարծիքով, ֆինանսական հոսքերը վերլուծելիս պետք է օգտագործել կիրառվող գործիքների բոլոր հնարավոր խմբերը: Այսինքն՝ արդյունքի վրա հատուկ գործոնների իրական ազդեցությունը պարզելու համար, առաջին հերթին, անհրաժեշտ է կապ հաստատել հենց այդ գործոնների միջև, այնուհետև, հիմնվելով դրանց տնտեսական նշանակության ազդեցության գնահատականի վրա, կառուցել մոդել, որը թույլ է կտա պատասխանել այն հարցերին, որոնք առաջացել են դրամական հոսքը գնահատելու գործընթացում:

Կախված դրանից, ընտրվում է գործոնների վերլուծության համապատասխան տեխնիկան: Որպես կանոն, վերլուծությունը ուղղվում է մի քանի գործոնների մոդելի կազմմանը, որի էությունն ազդող ցուցիչների (գործոնների) և արդյունքում ստացված ցուցանիշի միջև կախվածության բացահայտումն է:

Այս դեպքում գործոնային մոդելներ կառուցելիս խորհուրդ է տրվում պահպանել մի շարք հատուկ պայմաններ, մասնավորապես:

¹³ Կազմվել է հեղինակի կողմից

- ցանկացած գործոն պետք է ունենա տնտեսական իմաստ և քանակական մեկնաբանություն,
- յուրաքանչյուր գործոն պետք է ունենա իրական ազդեցություն, որը բացատրվում է կազմակերպության գործունեության բնույթով, արդյունքում ստացված ցուցանիշի վրա,
- մոդելում ներառված գործոնների ամբողջությունը պետք է հստակ ցույց տա նրանց և արդյունքում ստացված ցուցանիշի միջև կապը:

Վերլուծություն կատարելիս առավել հաճախ օգտագործվում են դետերմինիստիկ մոդելների այնպիսի տեսակներ, որոնք տարբերվում են փոփոխականների միջև կապի մաթեմատիկական ձևակերպմամբ:

Ֆիտակալան նորույթը: Ձևակերպվել է ֆինանսական հոսքերի սուբյեկտա-մակարդակային նոր դասակարգում՝ ըստ շուկայական սուբյեկտների գործունեության մակարդակի չափանիշի, համաձայն որի անհրաժեշտ է տարբերակել անհատական, կազմակերպչական, ազգային և միջազգային դրամական հոսքերի տեսակները: Նման մոտեցումն, ըստ էության, կարելի է դիտարկել որպես ֆինանսական հոսքերի առկա դասակարգումների ընդլայնման և հստակեցման վերաբերյալ ֆինանսների տեսության ընդլայնում: Հաշվի առնելով ֆինանսական հոսքերի վրա ազդող գործոնների վերլուծության և դրանց ազդեցությունը գնահատելու ժամանակակից մեթոդները առաջարկվել են կոնկրետ միջոցառումներ ՀՀ տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում դրանք ներդնելու համար:

Եզրակացություն: Ֆինանսական հոսքերի կառավարումը ենթադրում է միջֆունկցիոնալ փոխազդեցություն, կախված ընդունված գործառնական որոշումներից և դրանց ֆինանսական հետևանքներից: Դրա գնահատումը թույլ է տալիս վերահսկել ֆինանսական միջոցների հոսքերի մեծության և դինամիկայի վրա տարաբնույթ գործոնների ազդեցության գործընթացը և մշակել այդ գործոնների մոնիտորինգի և կանխատեսման համար անհրաժեշտ ցուցանիշների համակարգը:

Ընդհանրապես յուրաքանչյուր կազմակերպության ֆինանսական հոսքերի արդյունավետ կառավարումը ենթադրում է դրանց մանրամասն դասակարգում, ինչն էապես կընդլայնի դրանց վերլուծության և պլանավորման հնարավորությունները:

Հայտանիշների կազմը, որպես վերլուծության օբյեկտի, մեր կարծիքով, պետք է բավարար լինի ոչ միայն ընդհանուր ֆինանսական հոսքերի, այլև դրա հիմնական տարրերի ամենակարևոր հատկությունները որոշելու համար, քանի որ այն հանդիսանում է ֆինանսական հոսքերի կառավարման օբյեկտ և դրա ճշգրտումը հնարավորություն է ընձեռնում էապես փոխել կազմակերպության ֆինանսական վիճակը:

Կախված դրանից, ընտրվում են գործոնների վերլուծության համապատասխան տեխնիկան ու մեթոդները: Որպես կանոն, վերլուծությունը հանգում է մի քանի գործոնների մոդելի կազմմանը, որի էությունը ազդող

ցուցիչների (գործոնների) և արդյունքում ստացված ցուցանիշի միջև կախվածության ամրագրումն է:

Նշված առաջարկությունները կարող են օգտագործվել արտաքին միջավայրի բարձր անկայունության պայմաններում կազմակերպության վճարունակության կառավարման համապարփակ մոդելի մշակման համար և կրթարժագնեն ընդունված որոշումների հիմնավորվածությունը:

Ժամանակակից կազմակերպությունների արդյունավետությունը, թափանցիկությունը և մրցունակությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ակտիվացնել աշխատանքները ֆինանսական կառավարման մեջ թվային տեխնոլոգիաների և էլեկտրոնային աջակցության ինտեգրման ուղղությամբ, որոնք օպտիմալացնում և ավտոմատացնում են տարբեր ֆինանսական առաջադրանքները, ապահովում են իրական ժամանակում ֆինանսական տվյալների հասանելիությունը, ինչը թույլ է տալիս կազմակերպություններին ընդունել տեղեկացված որոշումներ և արագ արձագանքել շուկայի փոփոխություններին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Առաքելյան, Կ., Սարգսյան, Ա., Տնտեսական գործունեության վերլուծություն: Ուս. ձեռնարկ /Երևան: Զանգակ-97, 2009. - 184 էջ: էջ 337-339
2. Բադանյան, Լ., Արզարյան, Վ., Չատինյան, Գ., Մաթևոսյան, Ա. և ուրիշներ, Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ /Դասագիրք/ Եր., 2010.-588 էջ: էջ 337-339
3. Բադանյան, Լ., <<Արտադրական կազմակերպության ֆինանսներ>>, Երևան 2008.
4. Բայադյան, Ա., Ֆինանսական վերլուծություն: Ուսումնական ձեռնարկ /Երևան: Լիմուշ, 2013. - 294 էջ:
5. Գալստյան, Ա., Գ 206 Մաթեմատիկական վիճակագրության մեթոդները հոգեբանական հետազոտություններում: Ուսումնական ձեռնարկ / Ա.Ս. Գալստյան, Եր.: Հեղ. հրատ., 2015. - էջ 35: <http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2018/02/MatPsy2015.pdf>
6. Վարդանյան, Վ., Ֆինանսական մենեջմենթ, ՈԻ-ս ձեռնարկ, Եր. Արտագերս, 1999, 230 էջ:
7. Современные подходы к управлению финансовыми потоками предприятия, Саидов Ахмед Асланбекович, УДК 336, DOI 10.47576/2712-7516_2022_3_2_132
8. Бланк, И., Управление финансовыми ресурсами / И. А. Бланк. – М.: Омега-Л, 2010. ст. 592.
9. Лытнева, Н., Системный подход к анализу эффективности денежных потоков в управлении оборотным капиталом предприятия / Н. А. Лытнева, Ю. М. Петрова, О. А. Ростовцева // Научные записки ОрелГИЭТ. – 2019. –№ 4 (32). – ст. 12–19.

10. Рудакова, Т., Цыбенко, Е., Финансовые потоки организации: цифровое сопровождение и электронное управление // Управление современной организацией: опыт, проблемы и перспективы. 2023. № 18. С. 79–89.
11. Хахонова, Н., Выявление и анализ факторов, влияющих на формирование денежных потоков коммерческих организаций <http://www.bulletennauki.com> 375, Бюллетень науки и практики — Bulletin Of Science And Practice, научный журнал (scientific journal) №4 (апрель) 2016 г. ст.373-382.
12. Щитникова, И., Денежные Потоки Организации: Классификация, Особенности Формирования И Использования, http://edoc.bseu.by:8080/bitstream/edoc/93149/1/Shchitnikova_85_91.pdf
13. Friede, G., Busch, T., Bassen, A., ESG and financial performance: Aggregated evidence from more than 2000 empirical studies. Journal of Sustainable Finance & Investment. 2015, 5(4), P. 210–233

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածում ներկայացվում են ֆինանսական հոսքերի դասակարգման և դրանց վրա ազդող գործոնների առանձնահատկությունները, հիմնավորվել է այդ ուղղությամբ ավելի խորը ուսումնասիրությունների իրականացման և հաշվարկային ցուցանիշների գործնական կիրառման մոտեցումների վերանայման ու կատարելագործման անհրաժեշտությունը: Քննարկվել են կազմակերպության դրամական հոսքերի վրա ազդող գործոնները և կոնկրետ ընկերության օրինակով կատարվել դրանց գնահատում ու միկրոմակարդակում ֆինանսական հոսքերի դասակարգման և գնահատման գործընթացի բարելավման վերաբերյալ արվել առաջարկություններ: **Թեմայի արդիականությունը** պայմանավորված է ինչպես ֆինանսական հոսքերի վերաբերյալ ֆինանսական գիտության արդի մոտեցումների, այնպես էլ կազմակերպությունների ֆինանսական հոսքերի նոր ձևերի ու տեսակների խմբավորման իրականացման առումով:

Նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակը միկրոմակարդակում ֆինանսական հոսքերի դասակարգման, դրանց վրա ազդող գործոնների բացահայտման և գնահատման տեսական դրույթների ուսումնասիրությունն է և գործնական առաջարկությունների մշակումը ուղղված ՀՀ իրական հատվածի կազմակերպություններում ֆինանսական ակտիվների կառավարման կատարելագործմանը, որի համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել ֆինանսական հոսքերի դասակարգման, դրանց վրա ազդող գործոնների գնահատման մոտեցումներն ու մեթոդները,

- բացահայտել ՀՀ արտադրական կազմակերպություններում ֆինանսական հոսքերի դասակարգման, ինչպես նաև այդ հոսքերի վրա ազդող գործոններն ու դրանց ազդեցության գնահատման մոտեցումներն ու մեթոդները,

- ներկայացնել կոնկրետ և իրատեսական առաջարկություններ միկրոմակարդակում ֆինանսական հոսքերի արդի դասակարգումների ու այդ հոսքերի վրա ազդող գործոնների բացահայտման և դրանց ազդեցության չափի գնահատման վերաբերյալ:

Գիտական նորույթը: Ձևակերպվել է ֆինանսական հոսքերի սուբյեկտա-մակարդակային նոր դասակարգում՝ ըստ շուկայական սուբյեկտների գործունեության մակարդակի չափանիշի, համաձայն որի անհրաժեշտ է տարբերակել անհատական, կազմակերպչական, ազգային և միջազգային դրամական հոսքերի տեսակները: Նման մոտեցումն ըստ էության կարելի է դիտարկել որպես ֆինանսական հոսքերի առկա դասակարգումների ընդլայնման և հստակեցման վերաբերյալ ֆինանսների տեսության ընդլայնում:

Մեթոդաբանությունը: Հետազոտության ընթացքում կիրառվել են ֆինանսական ցուցանիշների համադրման և գործոնային կախվածության հաշվարկման մեթոդներ: Ուսումնասիրությունների համար հիմք են հանդսացել առանձին կազմակերպության վերջին չորս տարվա ֆինանսական հաշվետվությունների տվյալները:

Ստացված հիմնական արդյունքները: Հաշվի առնելով ֆինանսական հոսքերի վրա ազդող գործոնների վերլուծության և դրանց ազդեցությունը գնահատելու ժամանակակից մեթոդները առաջարկվել են կոնկրետ միջոցառումներ ՀՀ տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում դրանք ներդնելու համար:

Բանալի բառեր: Ֆինանսական հոսքերի դասակարգում, ներհոսք և արտահոսք, սուբյեկտա-մակարդակային դասակարգում, գլոբալ մարտահրավերներ, ESG գործունեություն, գործոնային մոդելներ, ֆինանսական հոսքերի վերլուծություն, գործոնների գնահատում:

CLASSIFICATION OF FINANCIAL FLOWS AND ASSESSMENT OF THEIR DETERMINANTS

KAREN NERSISYAN

Abstract

The article presents the peculiarities of classifying financial flows and the determinants. The necessity of deeper research in this area and the revision and improvement of practical approaches to applying computational indicators were substantiated. The determinants of the cash flows of an organization were discussed, and a case study was performed. Recommendations for improving the process of classification and assessment of financial flows at the micro-level were made.

Relevance. The relevance of the research topic is determined by both the current approaches of finance regarding financial flows and the implementation of grouping new forms and types of financial flows within organizations.

The article aims to study the theoretical provisions of the classification of financial flows at the micro-level, the identification and evaluation of determinants, and the development of practical recommendations for improving the management of financial assets in organizations within Armenia's real sector. To achieve this, the following tasks were set:

- To study the approaches and methods of classifying financial flows and assessing their determinants.
- To identify the factors influencing financial flows in Armenian organizations and evaluate their impact.
- To present specific and realistic recommendations regarding the current classifications of financial flows at the micro-level.

Scientific Novelty. A new subject-level classification of financial flows has been formulated based on the activity level criterion of market subjects, according to which it is necessary to distinguish between individual, organizational, national, and international types of cash flows. This approach can essentially be viewed as an expansion and clarification of existing classifications of financial flows in financial theory.

Methodology. Methods of combining financial indicators and calculating factor dependencies were used. The basis for the research was the financial reporting data of a specific organization for the past four years.

Main Results. Considering the modern methods of analyzing the influencing factors on financial flows and evaluating their impact, specific measures have been proposed for their implementation in organizations within Armenia's real sector economy.

Keywords. Classification of financial flows, inflows and outflows, entity-level classification, global challenges, ESG activities, factor models, financial flow analysis, factor assessment.

КЛАССИФИКАЦИЯ ФИНАНСОВЫХ ПОТОКОВ И ОЦЕНКА ФАКТОРОВ ВЛИЯЮЩИХ НА НИХ

КАРЕН НЕРСИСЯН

Аннотация

В статье представлены особенности классификации финансовых потоков и влияющих на них факторов. Обоснована необходимость более глубоких исследований в этой области, а также необходимость пересмотра и улучшения практических подходов к применению расчетных показателей. Обсуждены факторы, влияющие на денежные потоки организации, и проведена оценка на

примере конкретной компании. Сделаны рекомендации по улучшению процесса классификации и оценки финансовых потоков на микроуровне.

Актуальность темы обусловлена как современными подходами финансовой науки к финансовым потокам, так и реализацией группировки новых форм и видов финансовых потоков в организациях.

Цели и задачи. Цель работы – изучение теоретических положений классификации финансовых потоков на микроуровне, выявление и оценка влияющих на них факторов, а также разработка практических рекомендаций по совершенствованию управления финансовыми активами в организациях реального сектора экономики Армении. Для этого были поставлены следующие задачи:

- Изучить подходы и методы классификации финансовых потоков и оценки влияющих на них факторов.
- Выявить факторы, влияющие на финансовые потоки в производственных организациях Армении, и оценить их влияние.
- Представить конкретные и реалистичные рекомендации по текущим классификациям финансовых потоков на микроуровне, выявлению влияющих факторов и оценке их воздействия.

Научная новизна. Сформулирована новая субъекто-уровневая классификация финансовых потоков по критерию уровня деятельности рыночных субъектов, согласно которой необходимо различать индивидуальные, организационные, национальные и международные виды денежных потоков. Такой подход можно рассматривать как расширение и уточнение существующих классификаций финансовых потоков в теории финансов.

Методология. В ходе исследования применялись методы комбинирования финансовых показателей и расчета факторной зависимости. Основой для исследований послужили данные финансовой отчетности конкретной организации за последние четыре года.

Основные результаты. С учетом современных методов анализа факторов, влияющих на финансовые потоки, и оценки их влияния были предложены конкретные меры по их внедрению в организациях реального сектора экономики РА.

Ключевые слова. Классификация финансовых потоков, приток и отток, предметная классификация, глобальные вызовы, ESG-деятельность, факторные модели, анализ финансовых потоков, факторная оценка.